



Ա Բ Ա Բ Ա Տ Տ

ԹԻՒ Բ. — ԵՐԱԾՈՒ ԺԴ.

1881

ՏԱՐԻ ԺԴ. ՕԳՈՍՏՈՒ 31.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս. ՄԻՒՈԾՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վեհափառ եւ Արքաղնադոյն Հայրապետն ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի պէտս Եկեղեցեաց Հայոց կամի Ապոււծով Ա. Միւռօնի օրհնութիւն կատարել ի 46ն Մայիսի յառաջակայ 1882 թուականի ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին, որոյ վասն փութամբ ծանուցանել համայն Հայկազուն ժողովրդոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն բաղձալի եւ հոգեւոր մեծ հանդէս:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ եւ փառաւոր խորհրդաւոր արարտութեանց մին եւ գլուխորն է Ս. Միւլոնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշնուշտ եմք՝ զիսիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեռանդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան եւ շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաեւ բազմադարեան շքեղափառ վկայից եւ պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Վայրացս եւ անդին եւ սրբազն հնութեանց ուխտի եւ այցելութեան պարտքը հատուցանելով՝ միսիթարվիլ հրճուանոք ըստ հոգւոյ: